09.12.2020թ. կնքված ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-68-03 պայմանագրի
շրջանակներում ապրանքների մատակարարման վերաբերյալ

**համաձայնագիր № 2**

ք. Երևան 29 դեկտեմբերի 2020թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Արտավազդ Վանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ.Թագեսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-68-03» պայմանագրի 8.6 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

1. Հաշվի առնելով Վաճառողի գրությունը և նոր կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված արտակարգ իրավիճակը, ինչպես նաև հիմք ընդունելով 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կողմերը որոշեցին դեկտեմբերի 9-ին կնքված № ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-68-03 պայմանագրով ձեռքբերվող ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 15 աշխատանքյին օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2020-68-03» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12 | Հասցե՝ ք.Երևան, Լենինգրադյան 31/7 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 900018004649 | Հ/Հ 16047808168200 |
| ՀՎՀՀ 02625503 | ՀՎՀՀ 01232586 |
| Գլխավոր տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Վանյան | Տնօրեն՝ Հ.Թագեսյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |